

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է
2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՁՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇՍՏԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ
2019թ. նոյեմբերի 20-ը**

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Հուշարձանը նախատեսվում է իրականացնել բրոնզե հարթաքանդակի ձևաչափով, որը տեղադրվելու է Ջաքյան, Բեյրութի և Գրիգոր Լուսավորիչ փողոցներով պարփակված Մանկական այգու՝ Գրիգոր Լուսավորիչ փողոցից դեպի Ջաքյան փողոց ձգվող ցանկապատի 22-23-րդ հենապատերի միջնամասում (համաձայն կից ներկայացված հատակագիծ-սխեմայի),
- Հուշարձանի գաղափարական հորինվածքը սահմանափակվելու է ձեռքերի և նշմարվող մարմինների ուրվագծերի համադրությամբ՝ բացառելով ֆիգուրատիվ լուծումները և դիմանկարային նմանությունները,
- Հարթաքանդակը տեղադրվելու է բազալտե կրող հարթակի վրա, որը կարող է տարածվել դեպի այգու տարածքը ոչ ավելի, քան 120 սմ, ընդհանուր կոմպոզիցիայի մեջ նաև հնարավոր է ներառել ցայտադրյուր,
- Կրող հարթակի վերնամասում փորագրվելու է հուշարձանի անվանումը. «2008թ. մարտի 1-ի գոհերի հիշատակին»,
- Հուշարձանի գաղափարական հորինվածքից ելնելով ցանկապատի 22-23-րդ հենապատերի ապամոնտաժումը նախատեսվում պարագայում անհրաժեշտ է ներկայացնել կրող հարթակի միացումը ցանկապատի հետ,
- Հուշարձանը ճարտարապետական և գեղագիտական տեսանկյուններից պետք է ներդաշնակ և համահունչ լինի տվյալ միջավայրին, տարածության մեջ մասշտաբի առումով նպաստի ամբողջական ընկալմանը և չխաթարի հետիոտնի անարգել շարժմանը:

ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ

- Տարածքի գլխավոր հատակագիծը,
 - Ճարտարապետական փովածքները Մ 1:50,
 - Հուշարձանի կտրվածքը Մ 1:50,
 - Գունավոր գծագրերը 3D ձևաչափով, այդ թվում՝ գիշերային լուսավորության առաջարկ,
 - Բացատրագիրը /2 օրինակ/,
 - Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր, ներառյալ՝ մանրակերտը:
- Բոլոր նյութերը ներկայացնել 60սմ x 80սմ ձևաչափով*

ՄՐՅԱՆԱԿՆԵՐ





Հանձնաժողովի կողմից լավագույնը ճանաչված գործի հեղինակը պարզևատրվում է 2 մլն դրամով, և գործն իրականացվում է:

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մրցութային առաջակությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2020թ. հունվարի 15-ը հետևյալ հասցեով. Արգիշտի փողոց 1, Երևան: Հեռախոս՝ 011 514 158:
Գծագրերի աջ կողմում, վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը՝ շրիֆտի բարձրությունը 15 մմ:
Գործը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակի անունը (հեղինակային կազմը և մասնակցության տոկոսը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը:



ՍԻՆԵՍԱ
 2008 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱԾՆԵՐԻ ԳԻՇԱՏԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ ԳՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՔԻՅԱՆ, ԲԵՅՐՈՒԹԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՎՈՐԻԷՉԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՎ ՊԱՐՓԱԿՎԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԶԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ